Հաստատում եմ՝

«Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի

տնօրեն՝_______________________Գ.Մեհրաբյան

«____»«________»2023թ.

«ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ»

ՊՈԱԿ-Ի ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2023թ.

1.ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Սույն քաղաքականությունը կիրառվում է քոլեջի արտաքին կապերի և կրթական ոլորտների վրա և ուղղված է դրանց փոխկապակցված գործընթացի իրականացմանը:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Այս քաղաքականության նպատակն է ստեղծել ամուր հիմքեր քոլեջի և արտաքին գործընկերների, գործատուների գործունեության փոխկապակցման և ինտեգրման համար՝ ապահովելով կրթական գործընթացների միասնությունը և շահակից կողմերի ներգրավվածությունը:
- Մասնագիտությունների ուսումնական պլանները, կրթական մոդուլները և որակավորումները համապատասխանեցնել գործատուների ներկայացրած չափանիշներին:
- Արտաքին կապերի ընդլանմամբ հնարավորություն տալ շրջանավարտներին՝աշխատաշուկայում իրենց տեղը գտնելու համար:
- Ընդլայնել համագործակցության շրջանակը արտաքին կառույցների հետ, կնքել պրակտիկաների անցկացման համաձայնագրեր, որոնք կնպաստեն ուսանողների որակյալ պրակտիկաների անցկացմանը և բարձր գիտելիքներ ստանալուն:
- Պատրաստել որակյալ, գործատուների ներկայացրած չափանիշները բավարարող մասնագետներ :

ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Կրթական ծրագրերում ներդնել արտաքին քաղաքականության բաղադրիչը և նպաստել դրա կայացմանը. երկարաժամկետ, միջնաժամկետ,

կարճաժամկետ գործունեության պլանավորմամբ արտաքին կապերի իրականացման և զարգացման ապահովում:

- Արդյունավետ արտաքին փոխկապակցվածության ապահովում.
- դասախոսական կազմի և ուսումնառողների ներգրավվածություն արտաքին կապերում:
- Արտաքին կապերի կարգավորում և խթանում:
- Արտաքին կապերի կայուն զարգացում՝ ուսումնական և տեխնիկական համագործակցության ուղղություններ

Միջոցառումներ

- Զարգացնել համագործակցությունը ՀՀ-ում տարբեր ուղղվածություն ունեցող բուհերի հետ, ինչպես նաև տարբեր գործատուների հետ, կազմակերպել տարբեր ժողովներ, ուսանողական նախագծային շաբաթներ, մրցույթներ:
- Նպաստել և խրախուսել դասախոսական կազմի և ուսանողների շարժունակությանը, արտաքին գործընկերների հետ համատեղ աշխատանքի կատարմանը:
- Նախաձեռնել մասնագիտությունների ուսումնական պլանների, կրթական մոդուլների և որակավորումների համապատասխանեցում գործատուների չափանիշներին:
- միջոցներ ձեռնարկել ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում անցկացնելու համար:
- բարձրացնել հետազոտական ուսումնասիրությունների արդյունավետությունը:
- խրախուսել հետազոտական աշխատանքների միջոցով նոր գիտելիքի ձևավորումը և դրանց ուսուցման գործընթացում դրանց կիրառումը, հատկապես կարևորելով քոլեջի համար հիմնարար հանդիսացող էներգետիկական ուղղությունները:

- ապահովել աճող հետազոտական նախաձեռնությունների իրականացման վարչական և օժանդակող ծառայությունների գործունեության բավարար մակարդակը:
- կատարելագործել քոլեջի հանրային կապերը:
- ապահովել հանրության և գիտական աշխարհի իրազեկումը քոլեջի հետազոտական աշխատանքների արդյունքների ու ազդեցությունների վերաբերյալ:
- գնահատել քոլեջի համագործակցության պայմանագրերով ստանձնած գործառութային պարտականությունների և իրականացրած միջոցառումների արդյունավետությունը:
- ԱՊԷՔ-ի արտաքին քաղաքականության ընդլայնում, կատարելագործել քոլեջի ինտերնետային կայքը ամբողջական և հասանելի դարձնել քոլեջի մասին տեղեկատվությունը:
- թարմացնել և գտնել նոր գործատուներ, որոնց առկայությունը կապահովի քոլեջի ուսանողության որակյալ պրակտիկաների իրականացմանը:
- ապահովել հանրության և գիտական աշխարհի իրազեկումը քոլեջի հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ,որոնք վերահսկվում են քոլեջի և գործատուի կողմից:
- բացահայտել և ի նպաստ քոլեջի զարգացմանը օգտագործել երկրում և նրանից դուրս գտնվող հատազոտական ծրագրերի իրականացման ռեսուրսները, այդ թվում՝ գրանտային:
- խրախուսել գրախոսվող գիտական հանդեսներում դասախոսական կազմի անդամների հրապարակումները և օժանդակել գիտաժողովներին նրանց մասնակցությանը:
- հետազոտման և ուսուցման գործընթացները առավելագույնս ինտեգրել՝ ապահովելով ուսանողների պարտադիր ընդգրկումը հետազոտական խմբերի աշխատանքներում, բարելավելով կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի իրականացումը:
- խրախուսել ուսանողության գործունեությունը, դրա շրջանակներում հետազոտական աշխատանքների ղեկավարումը գործատուի և դասախոսի կողմից:

- ապահովել շարժունակության, լրացուցիչ շարունակական կրթության հնարավորությունների մասին տեղեկատվության տրամադրումը, ուսանողների և շրջանավարտների հետ հետադարձ կապը, առկա և կանխատեսվող թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով գործատուների հետ համագործակցումը, արհեստավարժ մասնագետների, հեղինակավոր անհատների, գործատուների հրավիրումը ուսանողների հետ հանդիպումներ և բաց դասեր անցկացնելու նպատակով:
- կազմակերպել ճանաչողական այցեր (էքսկուրսիաներ) ջէկ-եր, հէկ-եր և տարբեր էլցանցեր, որոնք կնպաստեն հատկապես էնեգետիկական ցիկլի ուսանողների գիտելիքների և ունակությունների մակարդակի բարձրացմանը և սովորողների մոտ էներգետիկական մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրության առաջացմանը:
- ընդլայնել համագործակցության շրջանակը տեղական կառույցների հետ, որոնց հետ կնքել պրակտիկաների անցկացման համաձայնագրեր.սա համագործակցության գերակա ուղղությունն է:
- արտաքին կապերը ապահովելու համար միջոցներ ձեռնարկել օտար լեզուների իմացության մակարդակը քոլեջում բավարարելու ուղղությամբ:
- չափազանց կարևորել արտաքին կապերի դերն ու նշանակությունը քոլեջի համար այն առանձնահատկությամբ, որ տարածաշրջանում լինելով իր պրոֆիլով միակ քոլեջը, տարածաշրջանային մեծ աշխատաշուկայի առկայության պարագայում, շրջանավարտների մուտքը կարող է բացվել քոլեջի ճանաչելիության աճով: